ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<19>> <u>օգոստոսի</u> 2025թ. N ՄՈ/<u>803</u>-Ա

ք. Արմավիր

«ՄՐԳԱՍՏԱՆԻ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՈՒՆՈՒՖԱՐ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նունուֆար Ասատրյանի 2025 թվականի օգոստոսի 18-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նունուֆար Ասատրյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի օգոստոսի 21-ից 27-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նունուֆար Ասատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Աննա Գևորգյանին:

3. «Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Աննա Գևորգյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի օգոստոսի 21-ից 27-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Նունուֆար Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 28-ից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-08-19 17:44:34 GMT+4
Հավաստված ԳԷԵՊԿ-ի կողմից

Բ□ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ